

Հարց Ինչպե՞ս կարող է դրսևորվել չհիմնավորված գինը:

Պատասխան Իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված (արհեստական) գները կարող են դրսևորվել ապրանքային շուկայում: Տնտեսավարող սուբյեկտի կողմից գների արհեստական բարձրացման, իջեցման, գինը պահպանելու և տարբեր տնտեսավարող սուբյեկտներին (սուբյեկտներից) ապրանքները խտրական (տարբերակված) գներով վաճառելու (գնելու) ձևերով:

- Ապրանքների իրացման գնի բարձրացումը չհիմնավորված (արհեստական) է, եթե տնտեսավարող սուբյեկտի կողմից, այլ հավասար պայմաններում, տվյալ ապրանքի իրացումից ստացվում է զգալիորեն ավելի մեծ շահույթ՝ քան մինչև գնի բարձրացումը:

- Ապրանքների ձեռքբերման գնի բարձրացումը չհիմնավորված (արհեստական) է, եթե տվյալ ապրանքի ձեռքբերումը և հետագա իրացումը (նաև վերամշակումից հետո) տվյալ տնտեսավարող սուբյեկտի համար, այլ հավասար պայմաններում, շահույթ չի ապահովում:

- Ապրանքների իրացման գնի իջեցումը չհիմնավորված (արհեստական) է համարվում, եթե ապրանքային շուկայում տնտեսավարող սուբյեկտի կողմից ապրանքն իրացվում է վնասով կամ առանց շահույթի:

- Չհիմնավորված (արհեստական) գին է ապրանքային շուկայում տնտեսավարող սուբյեկտի կողմից գնի մակարդակի պահպանումը կամ ոչ համամասնական փոփոխությունը (այսուհետ՝ պահպանում), երբ արտաքին և ներքին գործոններն այլ հավասար պայմաններում, օբյեկտիվորեն հանգեցնելու էին այդ ապրանքների գնի փոփոխության (բարձրացման կամ իջեցման):